

2009-11-09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացու-  
թյունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նոանյանի,  
Լիլիթ Գալստյանի և Արտյուշ Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկա-  
յացրած «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծով ըստ էության առաջարկվում է գնումների համակարգի միջոցով տեղա-  
կան արտադրությունը խթանել այնպիսի մեխանիզմով, որը ենթադրում է գնման պայմա-  
նագրի արտոնյալ պայմաններով շնորհում՝

ա) այն կազմակերպություններին, որոնք ապրանքն արտադրում են Հայաստանի  
Հանրապետությունում,

բ) աշխատանք կամ ծառայություն մատուցող՝ Հայաստանի Հանրապետությունում  
գրանցված կազմակերպություններին:

Այս պարագայում՝

ա) գնումները կիրականացվեն համեմատաբար թանկ գնով,

բ) պայմանագիրը կշնորհվի ըստ էության ոչ շուկայական մեխանիզմով՝ անհավասար  
մրցակցության պայմաններում,

զ) առկա է վտանգ, որ պայմանագրի շնորհման փուլում ներկայացվող տեղեկատվությունը կարող է արժանահավատ չլինել՝ սուբյեկտին կտրվի նախապատվությունը, սակայն վերջինս պայմանագիրը կկատարի այլ կերպ՝ ոչ տեղական ռեսուրսների օգտագործմամբ,

դ) առկա է վտանգ, որ մրցութային հանձնաժողովները համարժեքորեն չեն գնահատի մրցութային առաջարկները, և նախապատվությունը կտրվի ոչ օբյեկտիվ չափանիշներով, ինչի հետևանքով կաճեն կոռուպցիոն ռիսկերը,

ե) գնումների միջոցով տեղական արտադրության խթանման նպատակադրումը կարող է հանգեցնել անբավարար որակի գնումների կատարմանը, ինչը պետության, որպես գնորդի դեպքում, կհանգեցնի փողի դիմաց արժեքի նվազեցմանը:

Մյուս կողմից այս մեթոդի կիրառումը կհակասի «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակներին և գնումների հիմնական սկզբունքներին, որոնք միջազգայնորեն հանրահայտ են, այդ թվում՝ ԱՀԿ-ի գնումների համաձայնագրի պահանջներին, որին Հայաստանի Հանրապետության անդամակցությունն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի ՆԿ-68-Ս կարգադրությամբ հաստատված՝ ԵՀՔ ԵՄ-ՀՀ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ նշված ռիսկային գործոնների հնարավորությունը նվազեցնելու հանգամանքով պայմանավորված 2005 թվականին ընդունված «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքից հանվել է տեղական ռեսուրսների օգտագործման հանգամանքով պայմանավորված արտոնություններ նախատեսող դրույթը, ինչն առաջարկվել էր նաև Համաշխարհային բանկի կողմից: 2000-2004 թվականների ընթացքում նշված դրույթը գործնականում չի կիրառվել:

Բացի դրանից, բազմաթիվ պետությունների հետ կնքված ներդրումների խրախուսման մասին երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է պայմանագրերի մյուս կողմերին երաշխավորել արդար

և հավասար ռեժիմ և անհիմն կամ խտրական միջոցներով չվնասել այդ ներդրողների կողմից ներդրումների գործողության մեջ դրվելու կառավարմանը, պահպանմանը, օգտագործմանը, տիրապետմանը և տնօրինմանը (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության և Նիդերլանդների միջև կնքված համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության և Լատվիայի միջև կնքված համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության և Ֆինլանդիայի միջև կնքված համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության և Լիտվիայի միջև կնքված համաձայնագիրը և այլն):

Ելնելով նշվածից հայտնում ենք, որ նախագիծն ընդունվելու դեպքում այն կհակասի մի շարք միջազգային պայմանագրերի, որի արդյունքում համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի, եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքով, ապա կիրառվում են այդ նորմերը: Այսինքն՝ նշված դրույթները կիրառելի չեն լինի նշված միջազգային պայմանագրերի կողմ հանդիսացող պետությունների և Եվրոպայի խորհրդի անդամ հանդիսացող պետությունների իրավաբանական անձանց նկատմամբ: Նախագծի ընդունման դեպքում օրենքը կկիրառվի միայն այն պետությունների իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը չունի կնքված նմանատիպ միջազգային պայմանագրեր, և որոնք չեն հանդիսանում Եվրոպայի խորհրդի անդամներ:

Միաժամանակ ընդունելի համարելով ներքին արտադրության խթանման առաջարկը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ձեռնարկվել են միջոցներ տեղական արտադրության փոխարինման ճանապարհով ներմուծումը կրճատելու ուղղությամբ: Մասնավորապես, պետության կարիքների համար կատարվող գնումների ժամանակ հնարավորինս ճշգրտվում են գնման առարկաների տեխնիկական բնութագրերը՝ ներմուծվող ապրանքները տեղական արտադրության ապրանքներով փոխարինելու համար, իսկ ընտրանքի հնարավորության դեպքում ձեռք են բերվում բացառապես տեղական արտադրության ապրանքներ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Նախագիծ*  
*Պ-702-15.09.2009-ՏՀ-010/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու  
մասին**

**Հոդված 1.** «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-160-Ն, 6 դեկտեմբերի 2004) 34-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքը կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքն ու մատուցվող ծառայությունը ստանում է նախապատվություն օտարերկրյա ծագում ունեցող ապրանքի կամ օտարերկրյա կազմակերպության կողմից մատուցվող ծառայության նկատմամբ, եթե իր առաջարկվող գինը ավել չէ օտարերկրյա ծագում ունեցող ապրանքի կամ օտարերկրյա կազմակերպության կողմից մատուցված ծառայության գնից 15 տոկոսով:»

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (ՀՕ-160-Ն, 6 դեկտեմբերի 2004) առաջարկվող լրացումը նպատակ ունի նպաստել հայրենական արտադրության զարգացմանը, խթանել աշխատանքներ եւ ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը: Գնումների համակարգը հանդիսանալով սպառողական շուկայի վրա ազդող կարեւորագույն գործոններից մեկը, իսկ պետությունը՝ խոշորագույն սպառողը, իր ակտիվ մասնակցությամբ տեղական արտադրանքի եւ ծառայությունների գնման գործընթացին լրացուցիչ խթան կհանդիսանա ազգային տնտեսության զարգացման համար:

Ավելին, ներկայացվող փոփոխության գործադրման արդյունքում լուրջ նախադրյալներ կստեղծվեն Հայաստանի Հանրապետությունում նոր արտադրությունների հիմնման համար, քանի որ հնարավոր ներդրողը այս պարագայում կունենա վստահելի գործընկեր ի դեմս Հայաստանի Հանրապետության: Իր հերթին պետությունը գնումների համակարգի միջոցով կհանդիսանա հայրենական արտադրության երաշխավորված սպառողը, դրանով իսկ խրախուսելով Հայաստանում ոչ միայն առկա ոլորտների զարգացման, այլ նաեւ նոր տեսակի ապրանքների արտադրության եւ ծառայությունների յուրացման համար:

Հարկ է նշել, որ օրենքի առաջին տարբերակում (ՀՕ-62), որը ընդունվել էր 2000 թվականի հունիսի 5-ին, գործում էր որոշ չափով տեղական ռեսուրսների օգտագործումը խրախուսող դրույթ (հոդված 34-ի մաս 9-ը), թեեւ այդ ձեւակերպումը չէր ապահովում դրա ամբողջական կիրառումը: Սակայն հետագայում ընդունված նոր օրենքում տեղական արտադրությունը խրախուսող դրույթներ ընդհանրապես չներառվեցին:

Առաջարկվող լրացման հրատապությունն ավելի ակնհայտ է, եթե հաշվի առնենք համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետեւանքները եւ Հայաստանի Հանրապետության առջեւ կանգնած մարտահրավերները: